# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 1062

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ավագանու 2025 թվականի 25 սեպտեմբերի թիվ 72-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն 1, 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 1063

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐՏԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՔՍԱՅՈՒՂԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարտիկ Հովսեփյանի 2025 թվականի սեպտեմբերի 09-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 24.12.2024թ. թիվ 131-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 36 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մարտիկ Հովսեփյանի հայտը բավարարել և նրան տալ տեխնիկական հեղուկների, քսայուղերի վաճառքի թույլտվություն 01.01.2025-31.12.2025թթ. ընթացիկ տարվա համար:
2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 1064

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 72 ՀԱՍՑԵԻ 0.03922 ՀԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.003443 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Էդիկի Այվազյանի կողից ներկայացված 09.09.2025թ. թիվ 2089 դիմումը, 07.09.2021թ. թիվ 07092021-06-0041 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից հաստաված քաղաքաշինական փաստաթղթերը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից 20.11.2023թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, Ստեփանավան քաղաքի 2013թ. գլխավոր հատակագիծը, Ստեփանավան համայնքի ղեկավարի՝ 27.04.2024թ. թիվ 916 որոշումը, 03.12.2024թ. թիվ 1404, 13.12.2024թ, թիվ 1466 և 11 մարտի 2025թ. թիվ 401 գրությունները ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.04.2021թ. կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին թիվ 698-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մ. Բաղրամյան փողոց 72 հասցեի 06-007-0024-0004 կադաստրային ծածկագրի 0.0392 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից 0.003443 հա հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և ընդհանուր 0.0329 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի, որում ընդգրկված է նաև 0.003443 հա հողամասի նկատմամբ ճանաչել Էդգար Էդիկի Այվազյանի սեփականության իրավունքը:

2. Համայնքապետարանի համապատասխան բաժնին՝ Ստեփանավան քաղաքի հերթապա քարտեզում և գլխավոր հատակագծում օրենքով սահմանված կարգով իրականացնել համապատասխան փոփոխությունը:
3. Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված 20.03.2025թ. թիվ 20032025-06-0062 կասեցման որոշմամբ նշված՝ նախագծում պարիսպը նախատեսված չլինելու վերաբերյալ համայնքքապետարանի կողմից տրամադրվել են պարզաբանումներ 03.12.2024թ. թիվ 1404 և 13.12.2024թ. թիվ 1466 գրություններով, որը կարգավորվում է նաև ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման 4-րդ հավելվածի 1-ի ցակի 6-րդ կետի 2-րդ ենթակետի թ պարբերությամբ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից՝ Ստեփանավանի համայնքապետարանի կողմից ք. Ստեփանավան Մ. Բաղրամյան փողոց 72 հասցեի անշարժ գույքի պետական գրանցման համար հաստատված քաղաքաշինական փաստաթղթերից, համայնքի ղեկավարի՝ 27.04.2024թ. թիվ 916 որոշումից, 03.12.2024թ. թիվ 1404, 13.12.2024թ, թիվ 1466 և 11 մարտի 2025թ. թիվ 401 գրություններից, ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 1065

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԳՅՈՒՂ ՈՒՐԱՍԱՐ ՀԱՍՑԵՈՎ 06-106-0134-0045 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 12.09258 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 08.09.2025թ. թիվ 1036 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06042QGKSVJZ ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար հասցեով 06-106-0134-0045 կադաստրային ծածկագրից առանձնացված 12.09258 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար 21 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 1066

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԳՅՈՒՂ ՈՒՐԱՍԱՐ ՀԱՍՑԵՈՎ 06-106-0134-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 2.09988 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ -ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 08.09.2025թ. թիվ 1035 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06042VEHHETV ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար հասցեով 06-106-0134-0042 կադաստրային ծածկագրից առանձնացված 2.09988 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար 15 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան, +374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 1067

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԳՅՈՒՂ ՈՒՐԱՍԱՐ ՀԱՍՑԵՈՎ 06-106-0134-0035 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0.12321 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ -ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 08.09.2025թ. թիվ 1037 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06042U9YNZSK, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար հասցեով 06-106-0134-0035 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.12321 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար 16 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 1068

**ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԱԴԱՆԱՅԻ ՓՈՂՈՑ 24 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ 06-007-0158-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.05976 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.07.2025Թ. ԹԻՎ 911 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Մարինե Սերյոժայի Այվազյանի /ծնված 12.05.1963թ. անձնագիր AS0228542, տրված 13.06.2018թ. 053-ի կողմից/ կողմից ներկայացված դիմումը, 08.08.2025թ. Կադաստրի կողմից տրամադրված Կ-08082025-06-0184 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 28.07.2025թ. թիվ 911 որոշումը, 11.06.2025թ. N Ստ-320 ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստից 06.09.1989 թվականի թիվ 12 արձանագրությունից քաղվածքը, Ստեփանավանի համայնքապետարանի կողմից 15.09.2025թ. տրամադրված հողային բարեփոխումների և տեղական սեփականաշնորհման հանձնաժողովի 15 մարտի 1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ

հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հաշվի առնելով որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. 06-007-0158-0027 կադաստրային ծածկագրում գտնվող, համաձայն 11.06.2025թ. N Ստ-320 ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստից 06.09.1989 թվականի թիվ 12 արձանագրությունից քաղվածքի և հողային բարեփոխումների և տեղական սեփականաշնորհման հանձնաժողովի 15 մարտի 1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքի 0.06 հա մակերեսով հողամասը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի փաստացի կազմում է 0.05976 հա, որի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Մարինե Սերյոժայի Այվազյանի սեփականության իրավունքը:
2. Հաստատել՝ 06-007-0158-0027 կադաստրային ծածկագրի 0.05976 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:
3. Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային վիզաների վարչության Ստեփանավանի անձնագրային խմբի կողմից 27.06.2018թ. ելից թիվ 22/48-503 տեղեկանքի համաձայն, կատարվել է ազգանվան փոփոխություն վերը նշված արձանագրությունից քաղվածքի իրավատեր Մարինե Սերյոժայի Առաքելյանի ազգանունը փոխվել է «Այվազյան» ազգանունով:
4. Համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15 մարտի 1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքի՝ տրված 15.09.2025թ., նշված ծածկագրի հողամասը սեփականաշնորհվել է Մարինե Սերյոժայի Այվազյանին մեկ անձով:
5. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային

գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

6. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2025թ. թիվ 911 որոշումը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի միավորված մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 1069

### ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԱԴԱՆԱՅԻ ՓՈՂՈՑ 14 ՀՈՂԱՄԱՍ (ՆԱԽԿԻՆ ՀԱՍՑԵՆ՝ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 20-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11) ՀԱՍՑԵԻ 06-007-0158-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.05919 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.07.2025Թ. ԹԻՎ 912 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լարիոն Վազգենի Այվազյանի (ծնված 10.10.1956թ. անձնագիր 014536205, տրված 21.03.2022թ. 053-ի կողմից) կողմից ներկայացված դիմումը, 12.08.2025թ. Կադաստրի կողմից տրամադրված Կ-12082025-06-0064 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, 30.05.2025թ. N Ստ-294 ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստից 02.08.1989 թվականի թիվ 11 արձանագրությունից քաղվածքը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15 մարտի 1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքի տրված 15.09.2025թ., «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հաշվի առնելով որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. 06-007-0158-0022 կադաստրային ծածկագրում գտնվող, համաձայն 30.05.2025թ. N Ստ-294 ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստից 02.08.1989 թվականի թիվ 11 արձանագրությունից քաղվածքի և հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15 մարտի 1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքի տրված 15.09.2025թ. 0.06 հա մակերեսով հողամասը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի փաստացի կազմում է 0.05919 հա, որի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Լարիոն Վազգենի Այվազյանի սեփականության իրավունքը:
2. Հաստատել՝ 06-007-0158-0022 կադաստրային ծածկագրի 0.05919 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:
3. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Համաձայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15 մարտի 1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքի տրված 15.09.2025թ. նշված ծածկագրի հողամասը սեփականաշնորհվել է Լարիոն Վազգենի Այվազյանին մեկ անձով:
5. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2025թ. թիվ 912 որոշումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի միավորված մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 սեպտեմբերի 2025 թվականի N 1070

## ԱՐՄԻՆԵ ԱՄԱՍԻԱՅԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի օգոստոսի 22-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ ենթակետով հարուցվել է վարչական վարույթ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հիմքով, այն է՝ Ստեփանավան քաղաքային համայնքում ընտանի կենդանիները պահելու կանոնների խախտում՝ չնախատեսված վայրերով կենդանիներին դեպի արոտավայր ուղեկցում և կենդանիների կենսագործունեության արդյունքներով փողոցների և մայթերի աղտոտում: Իրավախախտումը թույլ է տրվել Ստեփանավան քաղաքի բնակչուհի Արմինե Ամասիայի Դավոյանի կողմից՝ Ստեփանավան քաղաքի Մխիթար Սպարապետ փողոցով իր անասուններին արոտավայր ուղեկցելու հետևանքով:

Վերոգրյալի կապակցությամբ 2025 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանում հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Արմինե Ամասիայի Դավոյանին վարչական վարույթի լսման վերաբերյալ ծանուցումը և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածի քաղվածքը /ծանոթացման թերթիկ/ փոստային առաքմամբ /բեռնային համար՝ LO129232938AM/ ուղարկվել է 2025 թվականի օգոստոսի 25-ին: Սակայն Արմինե Ամասիայի Դավոյանը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, որը «Չի պահանջվել» նշումով ետ է վերադարձվել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանին 2025 թվականի սեպտեմբերի 2-ին:

2025 թվականի սեպտեմբերի 5-ին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածի 15-րդ հոդվածի համաձայն, ծանուցումը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և հրավիրվել վարչական վարույթի նոր լսման օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին: Սակայն, Արմինե Ամասիայի Դավոյանը չի ներկայացել վարչական վարույթի լսմանը և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանին չի տեղեկացրել վարչական վարույթի լսմանը ներկայանալու անհնարինության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1, 30-րդ, 34-րդ, 37-րդ, 38-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածների դրույթներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, Ստեփանավան համայնքի ավագանու 07 մայիսի 2025 թվականի թիվ 42-Ա որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ**

1. Արմինե Ամասիայի Դավոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Ստեփանավանի համայնքապետարանի 900255101140 հաշվարկային հաշվին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Արմինե Ամասիայի Դավոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Ամասիայի Դավոյանին իրազեկման հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանավան համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 1071

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2023թ. N 2-11 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքը (Ստեփանավան, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրեր) ներառող Լոռի-5 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետության կառավարություն 27 ապրիլի 2006 թվականի N 570-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 8-ի N 65-Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով և 71-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության 06-106-0129-0029 կադաստրային ծածկագրի 51.0086 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0624-0059 կադաստրային ծածկագրի 16.74688 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0624-0056 կադաստրային ծածկագրի 13.6 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-106-0110-0017 կադաստրային ծածկագրի 22.6785 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային

նշանակության խոտհարք գործառնական նշանակության 06-106-0110-0014 կադաստրային ծածկագրի 32.4306 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0168-0004 կադաստրային ծածկագրի 3.2716 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության 06-007-0168-0002 կադաստրային ծածկագրի 6.82 հա մակերեսով հողամասերը Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0352-0008 կադաստրային ծածկագրի 5.31344 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0063-0033 կադաստրային ծածկագրի 1.33087 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0063-0032 կադաստրային ծածկագրի 4.51549 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0267-0001 կադաստրային ծածկագրի 4.44539 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0273-0001 կադաստրային ծածկագրի 2.28181 հա մակերեսով, անտառ նպատակային նշանակության, անտառ գործառնական նշանակության 06-007-0058-0025 կադաստրային ծածկագրի 0.29646 հա մակերեսով հողամասերի հետ փոխանակմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 1072

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ֆ. ՆԱՆՍԵՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 39 ՀԱՍՑԵՈՎ 06-007-0049-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նապոլեոն Խաչատուրի Մելոյանի կողմից 09.09.2025թ. ներկայացված 2095 դիմումը, 14.09.2007թ. տրված N 2334488 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011KHXHQK2 ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝ 06-007-0049-0008 կադաստրային ծածկագրում գտնվող, ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Ֆ. Նանսենի փողոց թիվ 39 հասցեում գտնվող բնակելի տան փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 1073

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18.04.2024Թ. ԹԻՎ 372 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 18.04.2024թ. թիվ 372 որոշման վերնագրից, հիմքերից և 1-ին կետից հանել «Գայանե Կոլյայի Մնացականյան» անուն ազգանուն հայրանունը:
2. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 18.04.2024թ. թիվ 372 որոշման հիմքերի մեջ ավելացնել՝ 09.09.2025թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը նոտարական ակտի կոդ 863-20241014-84-8423048:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 1074

## ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ 30/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Շավարշի Սարգսյանի կողմից ներկայացված 15.09.2025թ. թիվ 2145 դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, 29.07.2024թ. N 29072024-06-0023 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Ռումինական փողոց 30/12 հասցեում գտնվող, 06-007-0116-0027 կադաստրային ծածկագրում գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.076671 հա մակերեսով անշարժ գույքի տեղադիրքը և սահմանային չափերը՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 1075

## ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Շավարշի Սարգսյանի կողմից ներկայացված 15.09.2025թ. թիվ 2145 դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, 12.09.2019թ. N 21012025-06-0066 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Ռումինական փողոց 2/3 հասցեում գտնվող, 06-007-0116-0029 կադաստրային ծածկագրում գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.004 հա մակերեսով անշարժ գույքի տեղադիրքը և սահմանային չափերը՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 1076

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18.07.2025Թ. ԹԻՎ 876 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 18.07.2025թ. թիվ 876 որոշման վերնագրում, հիմքերում և 1-ին կետում Սուրեն Սարգսի Ջիլավյան անուն ազգանուն հայրանունից հետո ավելացնել Մացակ Սարգսի Ջիլավյան անուն ազգանուն հայրանունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

17 սեպտեմբերի 2025 թվականի N 1077

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.05.2025Թ. ԹԻՎ 637 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 21.05.2025թ. թիվ 637 որոշման վերնագրում, հիմքերում և 1-ին կետում Մացակ Սարգսի Ջիլավյան անուն ազգանուն հայրանունից հետո ավելացնել Սուրեն Սարգսի Ջիլավյան անուն ազգանուն հայրանունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 սեպտեմբերի 2025 թվականի N 1078

### ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ 06-007-0205-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 0.0044 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.06.2025Թ. N 713 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Լևոնի Անանյանի /ծնված 01.03.1983թ. ՌԴ անձնագիր 45 18 786221/ լիազոր ներկայացուցիչ Փաշիկ Մկրտիչի Մելիքյանի /ծնված 17.11.1988. անձնագիր AX 0331666/ կողմից ներկայացված 12.05.2025 թվականի թիվ 1041 դիմումը, 50AB0433701 լիազորագիրը, 50AB0433702 լիազորագիրը, 02.08.2024 թվականի թիվ 50AB0433699 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը գրանցված թիվ 4786 գրանցամատյանով, 02.08.2024 թվականի թիվ 50AB0433698 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը գրանցված թիվ 4787 գրանցամատյանով, թիվ 18 տնային գիրքը, 23.12.1965 թվականին տրված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. 06-007-0205-0007 կադաստրային ծածկագրում գտնվող «ՍԱՄՎԵԼ ԿԱՄՍԱՐԻ ՖՐԱՆԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի փաստացի կազմում է

0.0044 հա, որի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արմեն Լևոնի Անանյանի /ծնված 01.03.1983թվականին/ 1/2-րդ մասով և Լիլիթ Լևոնի Սեկրիյսի /ծնված 06.09.1981թվականին/ 1/2-րդ մասով սեփականության իրավունքը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.0044 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց ճանաչել Արմեն Լևոնի Անանյանի,Լիլիթ Լևոնի Սեկրիյսի սեփականության իրավունքը և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրանց սեփականության իրավունքը:
3. Հաստատել՝ 06-007-0205-0007 կադաստրային ծածկագրի 0.0044 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ՍԱՄՎԵԼ ԿԱՄՍԱՐԻ ՖՐԱՆԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:
4. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 02.06.2025 թվականի թիվ 713 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.hamaynqapetaran@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

19 սեպտեմբերի 2025 թվականի N 1079

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 04.09.2025Թ. ԹԻՎ 1029 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 04.09.2025թ. թիվ 1029 որոշման վերնագրում, 1-ին և 3-րդ կետում Անտառային փողոց 3-րդ նրբանցք 21/1 հողամաս հասցեն փոխարինել Անտառային փողոց 3-րդ նրբանցք 21/2 հողամաս հասցեով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ